

ՏԱՍՆՄԵԿԵՐՈՐԻ ՏԱՐԻ

ՄԵՆԿ

Տարեկան զինը 10 բուր, կէս տարվանը 6 բուր:
Առանձին համարները 5 կոպէկով:
Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրատան մէջ:
Օտարապետացիք զիմում են ուղղակի
Тифлис. Редакция «Менк»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերէն):
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիզուով:
Յայտարարութիւնները համար վճարում են
խրաբանչիւր թաղին 2 կոպէկ:

ԲՈՂԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Լուսաւորութիւն մասնաւորանքի մէջ:—Ներ-
քին ՏԵՍՈՒԹԻՒՆ: Հրապարակական դատաւո-
տութիւնների առիթով: Ներքին լուրեր:—ԱՐՏԱ-
ՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Անդկա: Եղիպտական հարց:
Արտաքին լուրեր:—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ:—ՀԵՌԱՌԻՐ-
ՆԵՐ:—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:—ԲԱՆԱՍԻՐԱ-
ԿԱՆ: Խմբագիր Մեքլերթիւններ:

ԼՈՒՍԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՄԱՇՄԵՏԱԿԱՆՆԵՐԻ ՄԷՋ

Քանի մի օր սրանց առաջ մենք հա-
ղորդեցինք մեր ընթերցողներին այն լուրը,
որ զիտաւորութիւն կայ Թիֆլիսում հրա-
տարակէ մի ամսագիր պարսկերէն, թուր-
քերէն և արաբերէն լեզուներով: Այդ ամ-
սագիրը, ի հարկէ, կը հրատարակվի արա-
բերէն տառերով:

Ամեն մի նոր փորձ մեր կողմանէն և
անդրկողական մահմետական ազգաբնա-
ւորութեան մէջ լուսաւորութիւն տարածելու,
մենք մեծ համակրութեամբ պէտք է բա-
րենք, քանի որ, պէտք է խոստովանվենք,
մեր մահմետական ազգաբնակիչները դեռ
կատարելապէս զուրկ է որ և է լուսաւո-
րութիւնից: Բայց, ինչպէս մենք միշտ ասել
ենք, և այժմ էլ կը կրկնենք, մահմետա-
կան ազգաբնակիչներէն մէջ լուսաւորու-
թեան տարածման գլխաւոր և անյաղթելի
արդիւնք աւրաբական տառերն են, որոն-
ցով շատ դժուար է գրել, շատ դժուար է
կարդալ և որոնք անընդունակ են գրադի-
տութիւն տարածելու ամբողջ մէջ, այլ
այդ դժուար ուսումնասիրելի տառերով
գրածները կամ տպվածները մատչելի են
լինում միմիայն ընթերցողներին մի շատ նեղ

շրջանին, այդպէս ասված ուսումնականնե-
րին: Իսկ ամբողջ գուրկ է մնում և միշտ
զուրկ կը մնայ գրադիտութեան և ընթեր-
ցանութեան միջոցներէն, քանի կը տիրա-
պետեն արաբական տառերը մահմետական
աշխարհի գրութիւններին մէջ:

Մտնել մահմետականներին մէջ ուսում,
գրադիտութիւն, տարածել մահմետական
ամբողջ մէջ լուսաւորութիւն կարելի կը լի-
նի միայն այն ժամանակ, երբ արաբական
տառերի տեղ հնազանդ է կը մտնեն ու-
րիչ սիստէմայի տառերը:

Կ. Պօլսի մէջ հրատարակվող մի քանի
թիւրքերէն լրագիրները հայերէն տառերով,
ցոյց տուցին փորձով որ հնարաւոր է փո-
խարենէլ արաբական տառերը ուրիշ սի-
ստէմայի տառերով: Հայոց այրեմարանը շատ
հեշտ կերպով արտայայտելով թիւրք լեզուի
հնչիւնները, շատ աջող կերպով պատուա-
վեց թիւրքերէն լեզուին:

Վերջապէս նոյն փորձը հարկաւոր էր և
մեզանում: Անդրկողական փորձել, հարկա-
ւոր էր ձեռք տալ մի թուրքերէն լրագրի
կամ ամսագրի հրատարակութեան հայերէն
տառերով:

Մեր կարծիքով այդ ձեռնարկութիւնը ա-
մենից լաւ կարող էր աջողվել այն անձին,
որ արդէն իր մի քանի գրուածներով շաղ-
կապ է կազմում մեր հայ և մեր թուրք
ազգաբնակիչներին մէջ, որ ոչ թէ մի-
այն գրել է մի քանի գրուածներ թուրքե-
րէն լեզուով, բայց որի թատրոնական գր-
ուածները թուրքերէն լեզուով արդէն խա-
ղաղվել են Երևանում և նոյն իսկ թուրք
թատրոնատերերից:

Մենք խօսում ենք պ. Վասակ Մադա-
թեանի մասին: Հաստ ցանկալի է որ պարո-
նը յանձն առնէր հիմնել Երևանում մի ժո-
ղովրդական փոքրիկ ամսագիր, կամ ամսա-
թիւրք թուրքերէն լեզուով և հայոց տառե-
րով: Թող այդ տեսակ լրագիր, կամ ամսա-
գիր հրատարակվէր սկզբից ամիսը մի ան-
գամ մի փոքրիկ թիւրքի մեծութեամբ, որ-
պէս զի նրա վրա ծախս շատ չը գնայ և
ապա, նայելով բաժանորդներին քանակու-
թեան, հնազանդ ընդարձակվէր:

Մենք կարծում ենք որ այդ տեսակ օգ-
տաւէտ ձեռնարկութեան համար այս րո-
պէս պ. Մադաթեանից աւելի յարմար
մարդ ամբողջ Անդրկողկաստում հայիւ թէ
կարելի է գտնել:

Եւ մենք հաւատացած ենք որ շատերը
հայոց հասարակութեանց կօշնէին պարո-
նին թէ իրանց նիւթական միջոցներով և
թէ իրանց գրական աշխատանքներով:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀՐԱՊԱՐԱՐՈՒԹԻՒՆ ԳԱՍԱԽՈՍՈՒԹԻՒՆՆԵՐԻ
ԱՌԻԹՈՎ

Ներկայ գտնվելով յօգուտ ընդհանուր
ուսուցչական ժողովի կարգադրած հրա-
պարակական դատաւոտութիւններին և լսե-
լով շատերի բերանից ցանկութիւն, որ այս-
պիսի գեղեցիկ և արդիւնաբեր գործը ան-
ընդհատ շարունակվէր ամեն տարի, իմ
մէջ մի միտք ծագեցաւ, որ շտապում եմ

տպագրութեան միջոցով հաղորդել հայ
հասարակութեան:

Ամենքը կարծեմ, արդէն համոզուած
են, որ ա) ամեն մի լաւ մշակված հրա-
պարակական դատաւոտութիւն կարող է
ծառայել հասարակութեան մտաւոր զար-
գացմանը և յառաջադիմութեանը, բ) լաւ
դատաւոտութիւնները միջնորդութեամբ կա-
րելի է հասարակութեան բարի զգաց-
մունքները և լաւ ձգտումները գործել և
այդ կերպով նորան բարի գործելու տրա-
մադիր անելով յօգուտ ընդհանրութեան
արդիւնները յառաջացնելով, գ) հրապարա-
կական դատաւոտութիւնները պատճառով
շատ ընտիր և հասարակօրոտ նիւթեր մը-
շակվելով կարող են ազդել մէջ տարածվել
և վերջիչեալ ազդեցութիւններ ունենալ և
դ) եթէ լաւ դատաւոտները հասարակու-
թեան կողմից բարոյապէս քաջալերվեն,
նա մանաւանդ եթէ նրանց աշխատութիւ-
նը մասամբ վարձատրվի, այն ժամանակ
նրանք աւելի սիրով և եռանդեամբ կաշխա-
տեն գործելու յօգուտ հասարակութեան:
Վասն որոյ ցանկալի կը լինէր, որ ամեն
տարի մի շաղք հրապարակական ընտիր դա-
տաւոտութիւններ տեղի ունենային և կա-
ռաւարկէին, որ այդպիսի մի օգտաւէտ գոր-
ծի գլուխ կանգնէր Թիֆլիսի հայոց Բարե-
գործական ընկերութեան վարչութիւնը: Նա
կարող էր մի կողմից չափաւոր վարձատրու-
թիւն նշանակել դատաւոտներին, միւս կող-
մից դատաւոտութեանց միջոցաւ հաւաք-
ված եկամուտը ընկերութեանը յատկաց-
նել և այդպէսով եթէ նիւթական օգուտ
չունենայ, մնաս ևս չի ունենայ. իսկ բարօ-

նպատակը իրագործելու համար շատ դժուարու-
թիւններ կային. իմաստը իր ցեղի կենցաղաւա-
րութեան պայմաններն էին:

Չուանչիցները, որպէս մի խաչնարած և թա-
փառաբան ժողովուրդ, ձեռք անց են կացնում
կուր գետի աջ ափերի մօտ տարածված տափա-
րակների վրա, ընտելացնելով շարժական տարաբա-
նակի մէջ, կամ գետնափոր խրճիթներով, իսկ
գարնան սկզբից մինչև աշնան վերջը սփռվում
էին Վարադղի լեռների վրա, իրանց անասուն-
ները արածացնելու համար: Զուրկ լինելով հա-
տատ բնակութեանց, նրանք գուրկ էին և հողի
սեպականութիւնից: Ամբողջ Վարադղը գտնվե-
լով հայ մէլիքների իշխանութեան ներքոյ, Չուան-
չիցները ստիպված էին իրանց ոչխարներից
տասանորդ վճարել, որպէս զի թոյլ տրվի իրանց
անասունները արածացնել մէլիքների արօտա-
ղիներում:

Ներկի աշխարհադրական դրքն այնպէս էր, որ
լեռնային անտառապատ բարձրաւանդակները,
հովիտներ, հովիտներ, որոնց վրա ամառանային
տօթերի ժամանակ կարող էր խաչնարածը ապաս-
տան գտնել, հայ մէլիքների ձեռքումն էին: Իսկ
լեռներից սկսված անջուր, ցամաք տափարակնե-
րի վրա, որ տարածվում էին մինչև կուր գետի
ափերը, թափառում էին Չուանչիցները: Փա-
նահ-խանը մտածում էր Վարադղի լեռների վրա,
մի տեղում հաստատ ոտքի տեղ ունենալ: Մի ա-
մուր դիւր ռազմապետական հարաւանքով նրան
պէտք էր իր նպատակները իրագործելու համար:

Այդպէս նա գնաց Բայաթ *) և այնտեղ սկը-
սեց մի բերդ հիմնել: Բայց Գիւլիստանի Մէլիք-
Բեգլարեան Մէլիք-Խուսրոյը և Զարաբդի Մէլիք-
*) Բայաթ աւերակ քաղաքատեղ է Գարգար
գետի մօտ:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԽԱՄԱՅԻ ՄԷԼԻՔՈՒԹԻՒՆՆԵՐ

IX.

Փանահ-խանի յայտնվելը

Երբ Նադիր-շահը Մուղանի դաշտում իրան
պարսից թագաւոր յայտնեց, այդ ժամանակ կուր
գետի աջ կողքի մօտ գտնված անապատների վը-
րա թափառող մի թուրք ցեղից, որ տեղի անու-
նով կուլում էին Չուանչիցից, բաւական մեծ
բազմութիւն գաղթեցին խաչնարածի կողմերը,
ընակեցնելով նրանց Սարխաւ կոչված գետաւտում:
Չուանչիցիցը, որպէս հովիտական կենսով ապրող
մի ժողովուրդ, իրանց զիտաւոր պարագմունք էին
ընտրել խաչնարածութիւնը և աւաղակութիւնը:
Ներկի խաղաղութիւնը պահպանելու համար, Նա-
դիրը աւելի բարեւոք համարեց այդ անհանգիստ,
կիսաւայրների ցեղը հեռացնել դէպի Պարսկաստա-
նի խորքերը:

Այդ ցեղի մի տոհմից, որ առանձին անունով
կոչվում էր Սարիխաւու, առաջ եկաւ Փանահ-
խանով մի մարդ, որը Պարսկաստան գաղթելուց
յետոյ, չորս գուաւ Շահի դրանը և ստացաւ մի
անհնաւ պաշտօն: Այդ պաշտօնի համար մի այլ
արժանաւորութիւն պէտք էլի, բայց միայն ունե-
նալ զօրեղ ձայն և երկրի սովորութեան համա-
մատ, թագաւորի հրամանները քաղաքի հրապա-
րակներում բարձր ձայնով հրատարակել: Փանահ-
խանը այդ արժանաւորութիւնը և թագաւորի դը-
րան մոնիտորը դարձաւ, կոչվեցաւ անուանեալ
«Չուանչի» Փանահ: Ներկայ այդ պաշտօնը կատա-
րում էր նա, բայց մի անկարգութեան համար,

երբ պիտի զխառնան դատաւարութիւնը, Պարսկաս-
տանից փախաւ և կրկին եկաւ իր հայրենիքը:
Որպէս յանցաւոր, նա անյայտ կերպով թափա-
ռում էր Վարադղի անապատներում, անհնաւ,
ատուրդական կիսովը էր վարում:

Յետոյ դիմեց նա Զարաբդի Մէլիք-Ալան-Ղուլի
սօլթանին և նրա մօտ ապաստան գտաւ: Սօլթ-
թանը նշանակեց նրան իր գիւղերի վրա որպէս
դարուղայ՝ այսինքն տուրքեր հաւաքող: Թէև Պարս-
կաստանից մի քանի անգամ սաստիկ հրամաններ
ստացվեցան, որ ըստն Փանահին և յետ ուղար-
կեն, բայց նա պահպանվելով հայ սօլթանի պաշա-
տանութեան ներքոյ, ազատ մնաց:

Երբ խաչնարածում, գիւղերը իր վրանի մէջ քնած
ժամանակ, իր դրանիկների դաւաճանութեամբ,
Նադիր շահը սպանվեցաւ հինգ իր վրանի պահա-
պանների ձեռքով (1747), այդ ժամանակ պարսից
գահը ժառանգելու համար սարսափելի խռովու-
թիւններ բարձրացան: Զանազան տեղերում գա-
նաղան թագաւորներ նստեցին, նահանգներից շա-
տերը ապստամբվեցան: Մահադի մէջ թագաւորեց
Նրա թոռը Շահ-Ռուհի կոչվածը: Արապատակա-
նում թագաւորեց նա եղբորորդի Աղիլ-Շահը, որի
եղբայրը Միրզա-Իրրախանը յետոյ կուրացնելով
հարազատ եղբորը, ինքը թագաւոր դարձաւ: Այդ
երկպառակութիւնների ժամանակ, երբ Պարսկաս-
տանում շատ իշխողների պատճառով երկիրը ան-
իշխանութեան մէջ էր գտնվում, Նադիրի խաչնա-
րած տարած Չուանչիցիցը գաղթականները վերա-
դարձան իրանց հայրենիքը՝ Վարադղի անապատ-
ները:

Այդ ժամանակ «Չուանչի» Փանահը իրան ազատ
զղաց. այլ ևս պատմվելու, գլխավորելու երկիրը
չունէր: Այդ մարդը, այդ հովիտի, անապատների
պարգաւառ որդին, երկար տարիներ ապրելով
պարսկական բարձր դրան ինտրիգաների մէջ, սո-

վորեց պարսիկների խորամանկութիւնը, վարժվե-
ցաւ նրանց խաբէյութիւնների մէջ:

Նա արդէն Զարաբդի հողը մէլիքի՝ Ալան-Ղու-
լի-սօլթանի ծառայութեան մէջ բաւական նշանա-
կութիւն էր ստացել: Երբ լսեց Նադիր-շահի մա-
հը և իր ցեղակիցների վերադարձը խաչնարածից,
թողեց այդ ծառայութիւնը և մտաւ Չուանչիցից
խաչնարածների մէջ, սկզբում նրանց նման
կենսեք էր վարում, որպէս մի հասարակ հո-
վիտ: Բայց յետոյ սկսեց փոքր առ փոքր դէպի իր
կողմը դարձել միամիտ խաչնարածներին, մինչև
յաջողվեցաւ նրան հրաժարեցնել տալ ցեղի նախ-
կին տնտեսութիւն (старшина) և իրան ընտրել
առաջ նրա տեղը:

Այդ չնչին պաշտօնը միայն մի առիթ էր, ո-
րով Փանահը կարողացաւ փոքր ժամանակում
խաչնարածների մի քանի ցեղեր իր հրամանին
ենթարկել: Բայց նրա փառասիրութիւնը զբաղում
չը յաղեցաւ: Նադիրի մահից յետոյ, երբ նրա եղ-
բոր որդի Աղիլ-շահը թաւրիւղում թագաւոր դար-
ձաւ, նա ուղարկեց դէպի Վարադղի կողմերը
Ամիր-Ալան-խան անունով մէկին, տեղային խո-
ւովիւնները խաղաղացնելու համար: Այդ ժա-
մանակ պարսից Շահերը այն անհաստատ դու-
րեան մէջ էին, որ մի օրվայ համար ևս իրանց
վիճակը ապահով չէին համարում: Այդ պատճա-
ռով շտապելով շտապելով օգուտ քաղել իրանց
դիրքից, մի քանի թուամիտով վաճառում էին պաշ-
տօններ, աստիճաններ, տիրույթներ և այլն: Զառ-
չի Փանահը նոյնպէս օգուտ քաղելով այդ հանգա-
մանքներից, ինչեալ Ամիր-Ալան-խանի միջնոր-
դութեամբ ստացաւ Աղիլ-շահից խաչնարածի
տիրույթ:

Բայց նա խելացի մարդ էր. նա մտածում էր
ստեղծել մի աւելի հիմնաւոր իշխանութիւն, որի
գլուխը, ի հարկէ, ինքը պէտք է լինէր: Իսկ այդ

յական օգուտը, ինչպէս յիշեցի, շատ մեծ էր լինի:

Եւ որովհետեւ յառաջիկայ կիրակի օրը բարեգործական ընկերութեան ընդհանուր ժողով է լինելու, արդեօք լաւ չէր լինի, որ թէ վարչութեան և թէ ընդհանուր ժողովի անդամները արժանաւոր ուշադրութիւն դարձնեն այս իմ առաջարկութեան վրա:

Նիկ. Տէր-Յակոբեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կատարարութեան ղեկավար Բուշ դատարանական իրաւագէտները վճարեցին զանգուածային զինուորական զինարար դատարանը: Կարծում են որ Բուշի դէմ յայտնած դատավճիռը կը մեղմացվի նրա ծերութեան պատճառով:

Ռուսաստանի ներքին գաւառներում քանի մի ժամանակեց անդադար հրդեհներ են պատահում: Այս օրերս էլ Բելգորոդեան գաւառի Տօմարովկա գիւղաքաղաքում 248 տներ են այրվել:

Մայիսի 14-ին հեռագրում են լրագրողներին որ Բիդայում մեծ հրդեհ է եղել: Այրվել են 20 տուն:

Թիւրքաց չայատանից եկած մի ակնյի մեղ պատմում է: «Այն քաղաքը շուրջը 20-ից ասելի հայ զինուորական, որոնք վաղուց է ընդունած են մահապատիւներ: Գիւղերից ոչ հեռու մինչև այժմ մնում են նախնեաց գերեզմանատները և եկեղեցիները: Այդ գիւղերի բնակիչները իրանց միշտ օտմանցի էին անուանում, իսկ այժմ դրանց մէջ մի քանի եռանդուն հայ երիտասարդներ մտնելով, սկսել են նրանց բացատրել ազգութեան և կրօնի գաղափարների տարբերութիւնը, հասկացնելով նրանց թէ կարող են մուսուլման էլ մնալով, շատ լաւ հայեր լինել ազգութեամբ: Նրանց մէջ գտնվում են արդէն այդ մտքին համոզվողներ, բայց նրանք երկիւղ են կրում թիւրք կառավարութեանից»:

ՇՈՒՇՈՒՅՑ մեղ գրում են որ այս տարւանից այդ քաղաքի երկսեռ ուսումնարաններում աւանդվում է հին-չայատանի աշխարհագրութիւնը, որ սիրով սովորում են թէ աղաները և թէ օրհորները: Նոյն իսկ ծնողները շատ զոհ են այդ առարկայի դպրոցի մէջ մտցնելուց:

Իսրայէլեան Մէլիք-Ալան-Ղուլի սովորած, միա-նալով Շիրվանի Հաջի-Էլիէի անունով կառավարչի հետ, ոչնչացրին այդ հիմնարկութիւնը: Յետոյ նա սկսեց Շահ-բուլղի մօտ, Թարնակիւրտ (Տիգրանակիւրտ) կոչված աւերակների վրա մի այլ բերդ կառուցեց: Այսպիսով անունով: Բայց Գիւլիստանի Մէլիք-Խաւրը, Ջրաբերդի Մէլիք-Ալան-Ղուլի սովորած և խաչքնի Հասան-Ջալալեան Մէլիք-Ալանիւրդին, այդ բերդը մօտ դրո-նելով իրանց երկիրների սահմաններին, սկսեցին պատերազմել նրա հետ և դարձեալ ոչնչացրին:

Տեսնելով այդ արգելքները հայ մէլիքները կողմից, խորամանկ փառաս-խանը մտածեց երկուս-ուսուկէ նրանց միաբանութիւնը, և այսպիսով թու-լացնել նրանց ուժերը, որպէս զի կարողանայ ի-րազորակ իր նախապետները: Նրան նպատակեցին մի քանի անցքեր, որ կատարվեցան այդ միջոց-ներում, և որոնք սկիզբ դրեցին Ղարաբաղի մէլի-քութիւնների քայքայմանը... Այդ էջերը արքան տխուր տեղ են բռնում Ղարաբաղի մէլիքների պատմութեան մէջ, որ մենք սակայն չենք հա-մարում մի փոքր ընդարձակ խօսել այդ մասին:

X.

Տիգրանի Մէլիք-Ալան-խանը, Պետրոս մեծի և Նադիր-շահի սիրելին, Ղարաբաղի մէլիքների գահերէցը, վաղուց արդէն վախճանված էր (1744): Նրա մահից յետոյ Ղարաբաղի իշխանների մէջ չը կար մի այնպիսին, որ նրա չափ հանճար և հե-ղինակութիւն ունենար, որ կարողանար պահա-նել մէլիքների մէջ խաղաղ ներդաշնակութիւն: Հանգուցեալի երէց սրդին, Մէլիք-Արամը, միայն մի տարի իշխեց: Նա այնքան թուլ մարդ էր, որ երբ Նադիր-շահի միակն օրդին վախճանվեց, և հարկաւոր եղաւ շահին միջնորդութեան համար, մի պատգամաւորութիւն ուղարկել, փոխանակ ինքը գնալու կամ ուրիշ արժանաւոր մարդիկ ուղարկե-

նով: Նովոնովից մեղ գրում են որ թիֆլիսից Նուրի տանող ճանապարհը, որ անցնում է շատ լեռնային արագընթաց տեղերով, այժմ շատ վտանգաւոր է դարձել: Անընդհատ անձրևների պատճառով շատ տեղ վտանգաւոր դառնալով կազմվել են, շատ տեղ խոր անդունդներ են դոյացել, շատ տեղ ճա-նապարհը թանձր տիգրով է ծածկվել և վերջա-պէս մի մի տեղ ջրերը անաղին, սառնալաւի մե-ծութեամբ բարեր են դրոշմ ճանապարհի վրա:

Մեղ գրում են Ա.Գ.ԱՇԷՆԻՑ: «Բագու-թիֆլիսեան երկաթուղին արդէն ամիս ու կէս է որ բանում է այդտեղ և ձրիապէս մարդիկ է տանում Աղա-չից Բագու և յետ բերում: Իսկ դէպի թիֆլիս չի-նուող զիմը դեռ երեկ բաւական կուշանայ, քանի որ Նուր դեռի վրա կառուցվող կամուրջը շատ ուշ կաւարտվի: Այսու են, մինչև անգամ, որ այժման կամուրջի շինութիւնը շատ խախտու է սկսված և ուրեմն պէտք է նորից կառուցվի: Այդ-ի հարկէ, դեռ մի քանի ամիս կը տեի»:

Մեղ գրում են Ա.Գ.ԱՇԷՆԻՑ: «Ժողովուրդը շատ սառն է դէպի հայոց ուսումնարանը: Մեր ուսուցիչը ահա քանի մի ամիս է որ իր ուժիկը չէ ստանում և ստիպված է, դեռ քննութիւնները չաւարտած, թողնել իր պաշտօնը: Գարձում ենք վերաւանուչ Յ. Տէր-Գրիգորեանցի ուշադրութիւնը մեր դպրոցի այս աննախանձելի դրութեան վրա»:

Ինչպէս մեղ գրում են, Նիկ. գիւղը 7.000 չափ հողի ուտիացի բնակիչներ ունի, որոնք գրեթէ ամենքն էլ լաւ կարողութեան տէր մարդիկ են: Բայց եթէ կը մտնէր Նիկի ուսումնարանը, կը տեսնէր որ այդ ուսումնարանի չէնքը գիւղական դոմից ոչինչով չէ զանազանվում: Այդ ողորմելի ուսումնարանն ասով չի նախապատրաստում մի դուռ որ ամառ ձմեռ բաց է լինում, դաստան մէջ լոյս գալու համար և ոչ մի լուսամուտ չունի: Չը կայ մէկը ամբողջ գիւղում որ ժողովրդին համո-զէ դպրոցի համար նոր շինութիւն կառուցանե-լու:

Այս տարի, ինչպէս մեղ հաղորդում են, Նու-խու մէջ և այդ քաղաքի շրջակայքում բազմաթիւ գողութիւններ և աւաղակութիւններ են պատա-հում:

Թիւրքաց-չայատանից եկողները մեղ պատմում են որ Աղաչի և Բաշկալայի կողմերը բերրի մի նոր չարժում է նշմարվում: Միայն դեռ ևս յայտ-նի չէ արդեօք այդ չարժումը թիւրքերի թէ պար-սիկների դէմ ուղղված կը լինի: Այս կողմերի հա-

լու, ուղարկեց իր կնոջը: Ինչպեցի կինը զարմաց-րեց պարսից բոլոր պալատականներին, երբ իր ավիտայի հետ, սպաղեխտ ներկայացաւ շահին: Իր միջնորդական ճառից յետոյ, տիկինը, բաւական խորամանկ քաղաքավարութեամբ, մատուց շահին 6.000 թուման փէլքէ, ասելով. «Կուք այնքան ողորմած էիք, որ փառաստանով Մէլիք-Ալան-խանի ձեզ մատուցած ծառայութիւնները, և յարգելով նրա ծերութիւնը, ձեր բարեւոյթը» (հոգնոր հայր) էիք կոչում: Նրա վախճանից յետոյ արժան էր, որ դուք ևս ձեր մասը ստանայիք ձեր հայրացուի ժառանգութիւնից: Եւ ևս ահա բերեցի ձեր բա-ժինը: Շահին այնքան հաճոյ թուեցաւ այդ ընծան, որ հրամայեց երկու այն չափով պարգևներ տա-լին նրան իր գանձարանից և մեծ յարգանքով ճա-նապարհ դրեց, նրա ձեռքով ուղարկելով նրա ա-մուսնի, Մէլիք-Արամի, հաստատութեան ֆիր-մանը:

Վերադառնալով Պարսկաստանից, տիկինը դը-տաւ իր ամուսնին վախճանված: Փառաս-խանի թէլաղութեամբ մի դաւաճան հայ թումուրիք էր նրան:

Մէլիք-Արամի մահից յետոյ Տիգրանի իշխանու-թիւնը իր ձեռքն առեց հանգուցեալի կրտսեր եղ-բայր Մէլիք-Նսային, որը իր յատկութիւններով բոլորովին նման էր իր հօրը:

Մինչև այսօր Տիգրանի գաւառի բնակիչները յի-շում են հին աւանդութիւնը, թէ երբ Մէլիք-Նսա-յին ծնվեցաւ, մահալարած պառուսները նկատե-ցին, որ աղայի աջ ձեռքի մատները խփված էին: Երբ բուռը բաց արին, տեսան ավի մէջ լինել արիւնով: Ան օրից նախադուշակեցին, որ երբ այդ մանուկը կը մեծանայ, դրա ձեռքով շատ արիւն-հեղութիւններ կը լինեն: Եւ իրաւ, Մէլիք-Ն-սային իր ամբողջ կեանքը անց կացրեց պատե-րազմներով: Տիգրանը պարսից սահմանի վրա լինե-

լով, Նրասիս դեռի ավի մօտ, ենթարկված էր պարսիկների անընդհատ յարձակումներին: Քաջ իշխանը իր երկիրը նրանց արշաւանքներից պահ-պանելու համար, ստիպված էր անդադար պատե-րազմել նրանց հետ:

Մեղ գրում են Երզրումից հետեւալը: «Սանա-սարեանի հաշուով հիմնված ուսումնարանը այժմ գտնվում է Երզրումի ամենալաւ անկից միում, բայց և այնպէս շինութիւնը դեռ չունի բոլոր հարկաւոր առողջապահական յարմարութիւնները: Ուսումնարանի համար սեփական տան չինելը կը սկսվի միայն այս ամառվանից և կարող է պատ-րաստ լինել հողի երեք տարվայ ընթացքում: Առ այժմ աշակերտները թիւր 24 է, բայց հիմնա-դրի ցանկութեամբ, որքան լսել ենք, պէտք է հասցրած լինի մինչև 400 հոգի: Մի խնդիր դեռ ևս վճռված չէ. արդեօք պէտք է ընդունել ամեն հայ աշակերտին, առանց կրօնի մէջ խտրութիւն դնելու, թէ միմիայն հայ-լուսաւորչականներին»:

Արեւի գաւառի Բելի գիւղից մեղ գրում են: «Մեր այրիների խաղողից պատրաստված գինին իր թանձրութեամբ, համով և արմատով (անու-շահոտութեամբ), շատերի կարծիքով գերազանցում է Կախեթի գինիներին: Գտնէ Նուխու և Աղաչի կողմերում ծառայող պետական պաշտօնականները մեր գինիները բոլոր կողմասեան գինիներից բար-ձր են դասում: Բայց մեղ դարմանում է որ մինչև այժմ կողմասեան Գիւղատնտեսական ըն-կերութիւնը ուշք չէ դարձրել մեր այդ աղիւս բերքի վրա»:

Մեր թղթակիցը Նովոնովից մեղ գրում է հե-տեւալը: «Մեղ մօտ բոլորովին ուշք չեն դարձ-նում առողջապահական պայմանների վրա: Քա-ղաքի ամենալաւ, ամենաբարձրամակարդ և գեղե-ցիկ մասում գտնվում են բազմաթիւ գործարան-ներ բարամա եփելու և թել քաշելու: Բարամա եփելուց մնացած ջուրը, որ մի դարձահոտ հեղուկ է, թափվում է առուների մէջ, այդ տեղից էլ ժանտահոտ ջուրը առաջ մղվելով, ապականում է ամբողջ քաղաքի օդը: Նորերումս էլ այդ բոլոր գործարանների դարձեալ աւելացել է բարամա եփելու մի գործարան, Աստուածածնի եկեղեցուց ոչ հեռու, նոյն իսկ այն ճանապարհի վրա, որ-տեղով անց ու դարձ է անում ամբողջ քաղաքը: Հրակիրում ենք վարչութեան ուշադրութիւնը այդ երեւոյթների վրա»:

Մի քանի օր առաջ թիֆլիսի ալիւրի հրապա-րակի մօտով անցնելիս, տեսանք մի խումբ հայ մշակներ, թուով 45-ի չափ, որոնք կանգնած էին և տարակուսած հայացքներ էին գցում իրանց շուրջը անց ու դարձ անդունդի վրա: Մտնեալով

լով, Նրասիս դեռի ավի մօտ, ենթարկված էր պարսիկների անընդհատ յարձակումներին: Քաջ իշխանը իր երկիրը նրանց արշաւանքներից պահ-պանելու համար, ստիպված էր անդադար պատե-րազմել նրանց հետ:

Մէլիք-Նսային առաջին էր Ղարաբաղի մէլիք-ների մէջ, որ հասկացաւ կանոնաւոր դրօքի և ընդհանուր զինուորացրութեան անհրաժեշտու-թիւնը երկրի ապահովութեան համար. նա սու-ղանք նշանակեց զինուորացիների վրա, եթէ նրանց ղեկները մէկը պակաս կը լինէր, կամ եթէ իրանց ղեկները չէին պահպանի անխաղաղ դու-թեան մէջ: Որոշեալ օրերում, երկրագործական պարագանքներից յետոյ, զինուորացի երիտասար-դները զբաղվում էին զինուորական մարտիկութե-աներով: Նրանց վրա կարգված էին տասնապետ-ներ, յիսնապետներ, հարիւրապետներ իրթելու համար: «Նրա ժամանակում, գրում է մի վարդա-պետ, մեր երկրում այնպիսի աղաճութիւն էր տիրում, որ դեռահաս աղջիկները այգիների ծա-ռերի տակ նստած, կար էին կարում, մնում էին այնտեղ, մինչև մութը պատում էր. հարսները դուզված, զարդարված դուրս էին գալիս տները և աներկիւղ դրօնում էին լեռների վրա, բոլո-րովին չը մտածելով, թէ թուրքը, կամ պարսիկը կը գա, կը յարկաւորէ և կը տանէ նրանց: Երբ թշնամին յայտնվում էր, երկրի երիտասարդները ղեկը ձեռքում միշտ պատրաստ էին նրան հան-դիպելու համար»:

Նադիր-շահի մահից յետոյ Մէլիք-Ալան-խանի տան բարեկամական յարաբերութիւնները պար-սից արքունիքի հետ կարգվեցան: Մէլիք-Նսային տեսնելով Պարսկաստանում խորոջ անկշիւտու-թիւնը, խռովութիւնները և ներքին պատերազմ-ները, և մանաւանդ ճանձրացած լինելով պարսից հարկահանքներից, վճռեց միանգամայն չը ճանաչե-

հարցրեք. դրանք մեղեցիներն էին, որոնք քանի մի ժամ առաջ հասել էին թիֆլիս, որպէս զի այստեղ մի քանի կօպէկ աշխատեն և վերադար-ձին այդ վատտակած կօպէկները տանեն գցնե-թիւրք կամ քիւրդ աղաների ձեռքը հարկերի ձե-ւով, իրանց ընտանիքի պատիւը հարստահարու-թեանց պահպանելու համար: Բոլորն էլ յաղթան-գամ մարդիկ էին, բայց նրանց դէմքերի վրա նկարվում էր մի անասելի տանջանք, որ հետե-ւանք էր իրանց դառն վիճակի: Տխուր մտած-մունքների մէջ հեռացանք մենք այդ խմբի: Խեղճերը որ նոր էին եկել, մոլորված էին. նը-րանք դեռ չը գիտէին թէ ճիշտը պէտք է անց-նեն այդ գիշերը, որտեղ պէտք է օթեան և ապա-ստան գտնեն: Իսկ թիֆլիսի ռամիկ անսիրտ ժո-ղովուրդը, որ այնքան պատուեց մեռած մշակու-թին, մինչև անգամ ծաղրում էր նրանց, այլ և այլ անուններ տալով... Ճշմարիտ է ասում հայոց ժողովրդական առածը, թէ. «Գնա մեռիւր, արի սիրեմէ»: Այո, մենք հայերս ամեն բան կորցնե-լուց յետոյ ենք միայն ախտաւոր, մի մարդու մահից յետոյ միայն սկսում ենք նրան սիրել, պատուել, հոգհանալիս նրա համար կատարել, նրա դերերմանի վրա մինչև անգամ թանգաղին արձաններ կանգնեցնել, նոյն ինչ գուցէ արձանի արժողութեան հարկերիւրդ մասը եթէ տրվէ որ-պէս օժանդակութիւն այն մարդուն իր կենդա-նութեան ժամանակ, նա գուցէ կապրէր: Նոյնը չէ՞նք արել մենք մեր բոլոր նշանաւոր գործիչնե-րի հետ, նոյնը չէ՞նք արել մենք այժմ այն ողոր-մելի եօթ նահատակ մշակների հետ: Իսկ կենդա-նի մնացողները մեղ ինչ փոյթ: Թող առաջ մեռ-նեն, յետոյ մենք նրանց կը վարձատրեմք:

Նուխուց մեղ գրում են որ նուխեցիները մեծ բարիքներ էին սպասում նոր եկած յաջորդ Սար-գիս վարդապետից: Բայց բոլոր յոյսերը, ասում է թղթակիցը, դուր անցան և յաջորդը իր նախորդ-ների նման դարձեալ ընկաւ երեւելի տէր Սիմօնի աղեկցութեան տակ:

«Юридическое Общество» չարթաթիւրթը հա-ղորդում է որ թիֆլիսի նահանգական դատարանը քննելով թէ որքան օրինական է պ. Պետրովի նո-րերումս թիֆլիսում բացված «Երաւաբանական դը-րասնեակը», գտաւ այդ դրասնեակի դպրութիւնը ապօրինի և տեղեկութիւն տալով այդ մասին պ. նահանգապետին, առաջարկեց փակել այդ դրա-սնեակը:

«Толось» լրագրի թիֆլիսի թղթակիցը խօսե-լով այն բանի մասին, թէ թիֆլիսեան նահանգի

նրանց և մերժել հարկապահանջներին: Այդ առի-թից օգուտ քաղեց փառաս-խանը և Մէլիք-Նսա-յուն մասնեց թաւրիղում նստող Ալի-Զահին: Հա-հը հրամայեց Ղարաբաղի *) կառավարիչ Քաղմ-խանին գնալ և պատմել Մէլիք-Նսայուն: Ղարա-բաղի խանը եկաւ դռները մեծ բազմութեամբ, ինքը փառաս-խանը մի քանի հազար հոգով միա-ցաւ նրա հետ, պաշարեցին Մէլիք-Նսայուն Տոդ բերդը: Ով որ տեսնէ է Տոդը, կարող է երեւակա-յել, որ թշնամու զօրքերի բազմութիւնը չէր կա-րող սարսափեցնել Մէլիք-Նսայուն, երբ որ իր քաջ զինուորների փոխարէն առաւելապէս բնու-թեան ամբուրթները պիտի պատերազմէին թշ-նամու զօրութեան դէմ: Հայոց զինուորները մա-սամբ պաշտպանված բերդի մէջ, մասամբ թաքնված շրջակայ լեռների խիտ անտառնե-րի մէջ, անախկալ յարձակումներ են գործում, և ջարդում են պարսիկներին: Ղարաբաղի խանը յաղթված, իր զօրքերի մեծ մասը կորցրած, յետ է դառնում Պարսկաստան: Հետեւալ տարին նա արշաւանք է գործում աւելի մեծ բազմութեամբ, փառաս-խանը դարձեալ միանում է նրա հետ, բայց երկուսի ջանքերը ևս ապարդիւն են անց-նում, Մէլիք-Նսային յաղթող է հանդիսանում:

Սթուռէտն փառաս-խանը ամբողջ եօթն տարի պատերազմեց Մէլիք-Ալանեան Մէլիք-Նսայու հետ, երբ նկատեց, որ նաոր չը կայ նրան հաղանդեց-նելու, ստիպեցաւ հաշտվել մտածելով, զուցէ բարեկամական միջոցներով կարող կը լինի ոչնե-լացնել նրան, և որպէս յետոյ կը տեսնենք, խո-րամանկ խանի այդ մտադրութիւնը յաջողեցաւ...

(Կը շարունակվի)

*) Պէտք է ի նկատի ունենալ, որ Ղարաբաղը (հին փայտալարանի մի մասը) և Տիգրանի գաւառը սահմանակից են, բաժանվում են միայն Նրասիս գետով:

Այդ օր ի հուռ մեք են ան Չինաստանում։ Մեր դարը, ամեն տեսակ գիտերի և մեքենաներ հնարելու դար է, ուրեմն չը պիտի դարձանայ այն բանի վրա, որ դրոժնական չինացիք ադօլթելու համար մեքենայ հնարեցին։ Չինացիները շատ աշխատանք և տոկոսն ժողովուրդ են, իսկ չորդդայի կոսըը աշխատանքի շատ ժամեր է խլելու, սակայնով նրանց որդեկ ժամերին երկար ադօլթենք տալ։ Ժամանակի այդ կարտից ազատվելու համար, չինացիները մտածեցին շինել մէկ մեծ և երկար թմուկ, որի վրաներսից և դրսից ադօլթենք են գրլած, բացի դրանից թմուկի ներսը ամրացրած են պատվող դհաններ, որոնց վրա նոյնպէս ադօլթենք են գրլած։ Եւր թմուկը պտոյս են տալի, դէպի ատտաթուլթեանը միաժամանակ ամրացնում են քաղմաթու ադօլթենքին, որոնցից նա կարող է իր ամենահաճախած ադօլթը բնորել։ Այդ թմուկները արեղաներն են կառավարում, որոնք թմուկի իւրաքանչիւր պտոյտի համար վարձ են վերցնում, ի հարկէ, շատ անհշտ, բայց դրա փոխարէն չինացուն աղատում են ժամանակի կրօնատից, որովհետեւ ադօլթելու թմուկի պտերը հաւատարարօր է համարում բերանալի ադօլթը ստելուն։ Այնու աւմնայնիւ, Տիբեթեան լեռների արեղաները ադօլթելու այդ մեքենայի մէջ պակասաթխներն զբոսն, և այդ պատճառով իրանք մէկ մեծ թմուկ լինեցին, լցրին ամեն տեսակ երկրորդական ադօլթենք զբաժ դհաններով, թմուկը ամրացրին սնիւի վրա և թղթէ թեքը կայքրին նրա վրա, նոյնպէս քամու ջաղացներն ունեն, նրանց վրա տոյնայն ադօլթենք դրած։ Այգալուծով, արեղաները կը մշակեն բրինձ և թէյ, թմուկի մօտ չը լանդեցին, որը քամովով է պտովում։ Բանտը

Типогр. Главн. Упр. Главнотач. гражд. час. Лор.-Мелик. ул., кав. д.